

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Տիգրան Սամվելի Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքի վերաբերյալ

Տիգրան Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ՀՀ պաշտպանական ոլորտի բարեփոխման, ռազմական անվտանգության պահանջներին բավարարող պաշտպանական համակարգի կատարելագործման խնդիրների համակողմանի վերլուծությամբ: 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը, 2021-2022 թթ. հայ-ադրբեջանական սահմանային բախումները, 2023 թ. սեպտեմբերի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բռնի տեղահանման գործընթացը Հարավային Կովկասի աշխարհառազմավարական պատկերն էական փոփոխությունների է ենթարկում: Տարածաշրջանը թևակոխում է ռազմավարական մրցակցության բարդ շրջափուլ՝ գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացներից անվտանգային կախվածության և խոցելիության մեծացմամբ, ինչն էլ նոր անվտանգային սպառնալիքներ է ստեղծում Հարավային Կովկասում ուժային բալանսի վերականգնման և անվտանգության համալիրի վերակառուցման համար: Տարածաշրջանում դաշնակցային համակարգերի փոփոխման և հիբրիդային սպառնալիքների մեծացման միտումները նոր անհրաժեշտություն են առաջացնում ՀՀ-ի ունեցած պաշտպանության գործող համակարգի արդյունավետության և ռազմական սպառնալիքներին դիմակայելու կարողության աստիճանի գնահատման համար:

Ատենախոսական աշխատանքի կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ժամանակակից պատերազմների փորձի հաշվառմամբ ՀՀ-ն ձեռնամուխ է եղել պաշտպանության ոլորտի բարեփոխումների իրականացմանը, ուստի՝ կատարված գիտական հետազոտությունը կարող է նպաստել պաշտպանության ոլորտի բարեփոխման գործընթացի արդյունավետությունը մեծացնող տեսական հիմքերի ապահովմանը և

գործնական առաջարկների իրականացմանը:

Ատենախոսական աշխատանքի նպատակը, հետազոտական խնդիրները և կիրառած մեթոդաբանությունը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսական աշխատանքների համար սահմանված ընդունելի չափանիշներին: Ատենախոսական աշխատանքի առաջին գլխում անդրադարձ է կատարվել հետխորհրդային պետությունների պետական կառավարման և պաշտպանության բնագավառի բարեփոխման գործընթացներին: Հատկանշական է, որ ատենախոսի կողմից համակողմանիորեն վերլուծության է ենթարկվել Վրաստանի և Ուկրաինայի կառավարման համակարգերի բարեփոխման և պաշտպանության ոլորտի արդիականացման գործընթացները: Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառում ոլորտային բարեփոխումների գործընթացին, որտեղ համակողմանիորեն քննարկվում են ՀՀ զինված ուժերի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը, զարգացման հիմնական փուլերը և ոլորտային բարեփոխումները: Ուշագրավ է, որ ատենախոսը առանձնացրել է պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) գործընթացի կարևորությունը: Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխում տարածաշրջանային անվտանգության միջավայրի փոփոխման դինամիկայի վերլուծությամբ անդրադարձ է կատարվել ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների իրականացման հիմնական ուղղություններին: Հատկանշական է, որ ատենախոսի կողմից կարևորվել է հետխորհրդային պաշտպանական համակարգերի արդիականացման գործընթացում ժամանակակից պատերազմավարմանը բնորոշ նորագույն մոտեցումների կիրառումը: Այդ համատեքստում հատկապես կարևորվում է ՋՈՒ-ում ՀԱՄ-ի ներդրման անհրաժեշտությունը:

Տիգրան Սամվելի Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ցանկանում ենք ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսական աշխատանքի առաջին գլխում ներկայացված հետխորհրդային պետությունների պետական կառավարման բարեփոխումների համատեքստում անդրադարձ կատարվեր ոչ միայն Վրաստանի և Ուկրաինայի կառավարման համակարգերի բարեփոխման գործընթացին, պաշտպանության ոլորտում իրականացված ինստիտուցիոնալ փոփոխություններին, այլ նաև՝ Վրաստանի և Ուկրաինայի ներքաղաքական ճգնաժամերի և գործող պետական կառավարման ձևի արդյունավետության փոխկապակցվածությանը, այսինքն՝ պետական կառավարման գործող ձևը ինչ խնդիրներ է առաջացրել ներքաղաքական գործընթացներում: Այդ համատեքստում անդրադարձ կարող էր

կատարվել նաև Վրաստանի և Ուկրաինային արևմտյան խորհրդատվությամբ իրականացվող պաշտպանության ոլորտի բարեփոխումների բացթողումներին և հաջողվածությանը, ՀՀ-ի պաշտպանության ոլորտի բարեփոխման գործընթացում դրանց կիրառման նպատակահարմարությանը (օրինակ՝ ՀԱՄ-ի և պրոֆեսիոնալ սերժանտական կազմի համակարգի ներդրման գործընթացում պետություններն ինչ խնդիրների են բախվել և ինչպես են դա հաղթահարել): Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային տարածությունում ներառված պետությունների հետ համեմատական անցկացնելու պարագայում կարիք կարող է առաջանալ անդրադարձ կատարելու նաև հետխորհրդային մնացյալ պետությունների պաշտպանության ոլորտի բարեփոխման գործընթացներին: Չնայած դրան, կարող ենք փաստել նաև, որ Հարավային Կովկասը դադարել է ամբողջությամբ ենթարկվել հետխորհրդային աշխարհառազմավարական տարածաշրջանային համալիրի գործընթացներին, ուստի՝ Վրաստանի և Ուկրաինայի հետ համեմատական անցկացնելու պարագայում նպատակահարմար կլինի այն ներկայացնել ոչ թե որպես հետխորհրդային, այլ՝ արևելատեղափոխական աշխարհառազմավարական համալիրում ներառված պետություններ: Այդ եզրույթի կիրառումը օրինակ Ադրբեջանի դեպքում կարող է այդքան էլ կիրառելի չլինել՝ հաշվի առնելով նրա կասպիական-կենտրոնասիական աշխարհառազմավարական համալիրում ներգրավվածության հանգամանքը:

2. Ատենախոսական աշխատանքի առաջին գլխում անդրադարձ կատարելով Վրաստանի սահմանադրական բարեփոխումների գործընթացին, ատենախոսը նշում է, որ 2017 թվականի սահմանադրական փոփոխություններով վերացվել է Վրաստանի ԱԽԽ ինստիտուտը: Մինչդեռ Վրաստանում ոչ թե վերացվում է ԱԱԽ-ն, այլ այն անցնում է վարչապետին՝ էականորեն ցածր լիազորություններով: Իրականում Վրաստանի ԱԱԽ-ն այժմ ունենալով միայն խորհրդատվական լիազորություններ՝ պետության պաշտպանության ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացում ավելի առանցքային դերակատարում ունի, քան ՀՀ-ի ԱԽ-ը, որը 2015 թվականի մայր օրենքի փոփոխությունների համաձայն դարձավ սահմանադրական ինստիտուտ՝ դառնալով պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանող գլխավոր մարմինը:

3. Ատենախոսական աշխատանքը էականորեն կշահեր, եթե ատենախոսի կողմից անդրադարձ կատարվեր նաև ռազմավարական նշանակություն ունեցող անվտանգային փաստաթղթերի մշակման հիերարխիայի ընտրության խնդիրներին: Մասնավորապես՝ ամերիկայն եռաստիճան (Ազգային անվտանգության ռազմավարություն - պաշտպանական ռազմավարություն - ռազմական-ռազմավարություն) և ռուսական երկաստիճան (Ազգային անվտանգության ռազմավարություն - ռազմական ղոկտրին) անվտանգային փաստաթղթերի

մշակման մեթոդաբանական ընտրությանը: Կամ էլ ուսումնասիրվեր ռազմավարական նշանակություն ունեցող անվտանգային փաստաթղթերի մշակման Վրաստանի կամ բալթյան պետությունների փորձը (ԱԱ հայեցակարգ – ոլորտային ռազմավարական փաստաթղթեր):

Այնուամենայնիվ, նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի գիտական նշանակությունը, ավելին՝ ատենախոսական աշխատանքում տեղ գտած մի շարք դրույթներ կարող են էական նշանակություն ունենալ ՀՀ պաշտպանության ոլորտի բարեփոխման գործընթացում պրակտիկ առաջարկների իրականացման համար: Տիգրան Սամվելի Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ԻԳ.00.02 «քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների թեկնածու

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ գիտնական-վերլուծաբան

Ռաֆիկ Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոս քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ գիտնական-վերլուծաբան Ռաֆիկ Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտական քարտուղար

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Զարգանդ Ասատրյան



Ք. Երևան

05.12.2023 թ.